ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱԱՇՁԲ-2025/77Շ

ք. Երևան «23» 12 **2025թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Երիցյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***S-2-13, Արգավանդ-Հայանիստ-Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 8+600-ում գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքները*** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված թիվ 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

1.4 Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝ շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով Տ-2-13, Արգավանդ-Հայանիստ-Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 8+600-ում գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքների կատարման արդյունքի կամ դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) նկատմամբ երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ

կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **3 (երեք)** օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա** ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **32 040 000** (երեսուներկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, որից **5 340 000** (հինգ միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

№	Խախտումը	Պատասխանատվությունը*	Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները	Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն կամ ձեռք բերման պայմանագիր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	3 օր	Չի տրամադրվում
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում 2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի բերրի շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	2 օր	Չի տրամադրվում
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված թույլատվության դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում

8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1) Նշանների մասով – 3 օր 2) Լուսաազդանշանային առկայծող լապտերների մասով - առավելագույնը - 12 ժամ	1) Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշանների վերականգնման համար – 1 օր: 2) Վնասված լուսաազդանշանային առկայծող լապտերների վերականգնման համար – 4 ժամ:
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	4 ժամ	1 ժամ
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	2 ժամ	Չի տրամադրվում
14	Շինարարական սորուն նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	24 ժամ	4 ժամ

* 1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

2. Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսից, իսկ առավելագույնը 1 (մեկ) տոկոսից:

3. Պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցների աղուսյակում նշված բոլոր խախտումների համար տուգանքի տոկոսների հանրագումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 10 (տաս) տոկոսը, իսկ 10 (տաս) տոկոսը գերազանցելու դեպքում պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

4. Տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,	ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011025815	ՀՀ 2050022023851000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 04102505
Գլխավոր քարտուղար՝	տնօրեն
Ա. Երիցյան	Ս. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1

« 23 » 12 2025թ. կնքված

«ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՍՇՁԲ-2025/77Շ » ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

S-2-13, Արգավանդ-Հայանիստ-Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 8+600-ում գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքներ

(ՀՀ հազար դրամ)

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	Երթևեկային մասի ա/բ ծածկի կազմատում պնևմագործիքով: Բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. վրա:	մ³	3	7,294	21,882
2	Նույնը պ/բետոնը:	մ³	2	7,294	14,588
3	Մայթերի բլոկների ապամոնտաժում 5տ բ.բ. ամբարձիչով, բարձում ավտոմեքենա և տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. վրա: Չափ - 71x165x299սմ, P_1=1.85տ:	հատ	4	32,808	131,232
4	Թռիչքային կառուցվածքի հավաքովի ՊՐ-6 մակնիշի սալերի ապամոնտաժում 5տ բ.բ. ինքնագնաց սլաքավոր ամբարձիչով: Բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. վրա: Չափ. - 30x98x600սմ, P_1=2.7տ:	հատ	11	36,969	406,659
5	Հենարանների ֆերմատակերի ե/բետոնի կազմատում պնևմագործիքով: Բեկորների կույտավորում և բարձում ա/ի ձեռքով: Տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. վրա:	մ³	4,7	46,155	216,929
6	Կակրջատակի գրունտի (7.3-III) մաքրում ձեռքով կրկնակի գցումով: Բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. վրա:	մ³	30,0	7,253	217,590
7	Հենարանների բլոկների կարերի լրալցում միաձույլ բետոնով:	մ³	0,9	76,180	68,562
8	Հենարանների իրանների մակերևույթների վերանորոգում M200 մակնիշի ցեմենտ-ավազային շաղախով ($δ_{միջ}$=5սմ) նախապես ամրանային ցանցերի տեղադրումով (50x50)մմ Ø4 Bp-I, P=233.6կգ:	մ²	59,0	45,534	2 686,506
9	Ֆերմատակերի բլոկների հավաքովի ե/բետոն: AIII Ø25 P_1=9.24կգ, Ø12 P_1=53.73կգ, AI Ø8 P_1=24.33կգ:	հատ	4	485,127	1 940,508
10	Միաձույլ ե/բ իրականացում ֆերմատակի վրա: AIII Ø12 P=84.5կգ, AI Ø8 P=16կգ:	մ³	1,8	129,500	233,100
11	Ցեմ. շաղախի իրականացում ՊՕՀ ՍՊ տիպի հենարանային մասերի տակ δ=2սմ:	մ²	1,93	1,424	2,748
12	ՊՕՀ ՍՊ տիպի ռետինե-մետաղական հենարանային մասեր Չափ. 40x150x350 մմ, քաշը P_1=0.0053 տ: Այդ թվում ռետին:	հատ	26	77,273	2 009,098
13	Թռ. կառուցվածքի սալերի հավաքովի ե/բետոն.չափ- 30x98x570սմ, քաշը-4.025տ, ա.պ A240=26.8 կգ/մ³, A500c=171.3 կգ/մ³:	հատ	12	912,563	10 950,756

14	Թռիչքային կառուցվածքի ե/բ սալերի մոնոլիտացում (միավորում): Խճի չափամասը ≤20մմ: Ամրանային պարուրակները AI Ø3 L₁=36,6մ:	մ³	1,2	72,259	86,711
15	Հարթեցնող շերտի իրականացում միաձույլ մանրահատիկ բետոնից W6, H=3սմ:	մ²	59,6	4,052	241,499
16	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ մայթերի բլոկների սահմաններում H=3սմ:	մ²	15	1,171	17,565
17	Երթևեկային մասի սոսնձային ջրամեկուսացում (գլանափաթեթային բիտումա -պոլիմերային):	մ²	92,2	7,163	660,429
18	Ցեմենտային շաղախ մայթերի բլոկների տակ H=3սմ:	մ²	15	9,000	135,000
19	Т-1-0.75 մակնիշի մայթերի բլոկների տեղադրում թռիչքային կառուցվածքներում ինքնագնաց սլաքավոր 5տ բ.բ. ամբարձիչով: չափ. 86x140x299սմ, քաշը - 1.95տ: ա.պ. AI=89,84կգ/մ³, AIII=66,61կգ/մ³:	հատ	4	376,722	1 506,888
20	Պաշտպանիչ շերտ միաձույլ բետոնից W6, H=4սմ ամրանավորված ցանցով (100x100)մմ Ø4 Вр- I, P=0.421 տ:	մ²	72,84	6,293	458,382
21	Երթ. մասի ներքին շերտի H=5սմ մանրահատիկ "Б" տիպի խիտ ա/բ ծածկի իրականացում:	մ²	58,7	6,290	369,223
22	Երթ. մասի վերին շերտի H=4սմ մանրահատիկ "Б" տիպի խիտ ա/բ ծածկի իրականացում:	մ²	61,1	5,102	311,732
23	Մայթերի սոսնձային ջրամեկուսացում (գլանափաթեթային բիտումա -պոլիմերային):	մ²	9,0	7,163	64,467
24	Մայթերի մանրահատիկ "Б" տիպի խիտ ա/բ $H_{միջ}$=4սմ:	մ²	9,0	5,179	46,611
25	Մայթերի բլոկների վրա պողպատե բազրիքների պատրաստում և տեղադրում ներկումով. L 63x63x6 մմ L=7.84 մ, P=44.84 կգ; L 50x50x5 մմ L=23.52 մ, P=88.80 կգ; L 70x70x6 մմ L=11.88 մ, P=76.0 կգ; -5x50 մմ L=0.78 մ, P=1.6 կգ; Ø12 L=55.44 մ, P=49.2 կգ:	տ	0,26044	0,576	0,150
26	Կցորդման հատվածներում խրամուղիների փորման հողային աշխատանքներ (7.3-III կարգի գրունտում) ձեռքով անվահրիչների տեղադրման համար:	մ³	1,4	7,714	10,800
27	Ավազակոպճային նախապատրաստում կցորդման անվահրիչների բլոկերի տակ:	մ³	0,35	11,255	3,939
28	Ավազակոպճային նախապատրաստման վերևը ցեմենտային շաղախի իրականացում H=3սմ:	մ²	3,2	1,923	6,154
29	Հավաքովի ե/բետոնե անվահրիչների բլոկների տեղադրում կցորդումներում. Չափ. 15(50)x75x150սմ, P=0,53տ, ա.պ. = 83,15կգ/մ³:	հատ	3	80,368	241,104
30	Մայթերի անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	14,0	0,938	13,132
31	Մոտեցումներում ա/բ ծածկի կազմատում 2.0մ³ շ.տ էքսկավատորով: Բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 2կմ հեռ. վրա:	մ³	42,0	1,770	74,340

32	9.6-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս 2մ³ շտ ա/ի և տեղափոխում պահեստ 1կմ:	մ³	168,0	1,613	270,984
33	9.6-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. շ/տ 2մ³ ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում,ջրում,խտացում):	մ³	168,0	1,794	301,392
34	Լիցքի իրականացում գլաքարով 40մմ մեծ (հարթում,ջրում,խտացում):	մ³	100,0	9,262	926,200
35	Ավազակոպճային նախապատրաստում:	մ²	477,3	1,229	586,602
36	Խճավազային հիմք (C-5) h=20սմ ԳՕՍՏ 25607-2009:	մ²	477,3	1,634	779,908
37	Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ² ԳՕՍՏ Ռ 58952.1-2020:	մ²	477,3	0,368	175,646
38	Խոշորահատիկ ա/բետոն:	մ²	477,3	6,915	3 300,530
39	Բարձր խտությամբ մանրահատիկ ա/բետոն:	մ²	477,3	5,102	2 435,185
40	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում-հոծ:	գ.մ.	132,6	0,102	13,525
41	Ճանապարհի առանցքով հորիզոնական գծանշում-հոծ:	գմ	66,3	0,102	6,763
42	Նոր ճան. նշանների տեղադրում, ԳՕՍՏ Ռ 52290-2004 Արգելող - 3.12:	հատ	2	58,416	116,832
	Ընդամենը				**32 061,849**
	Ընդամենը չնախատեսված ծախսեր**				**785,961**
	Ամբողջը*				**32 847,811**
	Պայմանագրի 5.1 կետում նշված գինը (ՄԳ)				**32 040. 000**

**Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը»՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%*

***Չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:*

Հիմք՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 1656-Ն որոշում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900001025815

ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար

Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՀՀ 2050022023851000

ՀՎՀՀ 04102505

տնօրեն

Ս. Կարոյանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2

« 23 » 12 2025թ. կնքված

ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՇՁԲ-2025/77Շ » ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

S-2-13, Արգավանդ-Հայանիստ-Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 8+600-ում գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքներ

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	*Աշխատանքների կատարման ժամկետը*	
		սկիզբը	**ավարտը**
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 10 օր
2	Հենարաննի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օր
3	Թռիչքային կառուցվածքի իրականացման աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 40 օր
4	Երթևեկելի մաս	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 60 օր
5	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022023851000
ՀՎՀՀ 04102505
տնօրեն
Ս. Վարդանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3

« 23 » 12 2025թ. կնքված

«ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՇՁԲ-2025/77Շ » ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221117/12	S-2-13, Արգավանդ-Հայանիստ-Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 8+600-ում գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	32 040 000	**32 040 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011025815

ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար՝

Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՀՀ 2050022023851000

ՀՎՀՀ 04102505

տնօրեն

Ս. Վարդանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 4

« 23 » 12 2025թ. կնքված

« ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՇՁԲ-2025/77Շ » ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1

« 23 » 12 2025թ. կնքված

« ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՇՁԲ-2025/77Շ » ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը

(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Հավելված N 5

«23» 12 2025թ. կնքված

«ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱՇՁԲ-2025/77Շ» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .

ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված

պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի

կապալառուի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.